«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ	Խոսքի զարգացումը հեքիաթների միջոցով
ԱՌԱՐԿԱ	Մայրենի
ՀԵՂԻՆԱԿ	Նարինե Մկրտչյան
ՄԱՐԶ	Վայոց ձոր
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ	Ագարակաձորի Յուրա Խաչատրյանի անվան միջն. դպրոց

Բովանդակություն

1. Ներածություն

2. Խոսքի զարգացումը հեքիաթների միջոցով

3. Գործնական մաս

4. Եզրակացություն

5. Օգտագործված գրականության ցանկ

1. Հեքիաթն այնպիսի իրական հայելի է, որի մեջ ամեն մեկն իր պատկերն է տեսնում:
(ժողովրդական)

2. Խոսքը լեզվի իրական վիճակն է,
իսկական գոյը:
(Ղ. Աղայան)

Ներածություն

Խոսքի զարգացման հարցերը միշտ էլ հետաքրքրել են մարդկությանը: Դեռևս հին հույն փիլիսոփաները (Սոկրատես, Պլատոն, Արիստոտել), հռոմեացի մանկավարժ Մարկ Ֆաբիյեյ Քվինթիլիանոսը, Վերածննդի դարաշրջանի հայ մանկավարժ Հովհաննես Սարկավագ Իմաստասերը և ուրիշներ իրենց աշխատություններում անդրադարձել են այդ հարցերին:

Երեխաների խոսքի զարգացումը կապված է երեխաների անհատական առանձնահատկություններից, տարբեր է նաև նրանց խոսքի զարգացման ընթացքը: Կարևոր է շրջապատի մարդկանց գրագետ, ճիշտ խոսքը, երեխայի խոսքի ձևավորման ղեկավարումն ու վերահսկումը:

Երեխայի խոսքի զարգացման ամենաարդյունավետ ձևը բնական հաղորդակցումն է: Դրա համար պետք է երեխայի համար ստեղծել բնական հաղորդակցության ձևեր: Երեխայի ցանկացած գործունեության ժամանակ պետք էքաջալերել երեխայի արտահայտվելու ցանկությունը, հնարավորություն տալ երեխային ազատ, անկաշկանդ խոսել, քանի որ, որքան մեծ է երեխայի արտահայտվելու, խոսելու ցանկությունը, այնքան մեծ է նրա խոսքի հղկված լինելը:

Խոսքի զարգացման գործընթացում առանձնապես շեշտադրված է երեխաների հաղորդակցման լիիրավությունը, շրջապատի մարդկանց հետ հարաբերությունները կարգավորելու ունակությունը, հնչյունային մշակույթի զարգացումը ինչի կարիքն առանձնապես շատ ունեն ժամանակակից երեխաները:

Մայրենիի առարկայական ծրագրերի ժամանակակից ուղղվածությունը աշակերտների խոսքային զարգացման հարցերում մղում են մեթոդական նոր որոնումների՝ դասի ընթացքում աշակերտների խոսքի զարգացման և, մասնավորապես, հաղորդակցական կարողությունների ձևավորման խնդիրների տեղի և դերի որոշման հարցում:

Լեզվի դասն առաջին հերթին աշակերտների խոսքի և մտածողության զարգացման դաս է:

Կրտսեր դպրոցականին բնորոշ է այն, որ ի հայտ է գալիս շրջապատող մարդկանց, իր և բարոյաէթիկական նորմերի մասին պատկերացումների բավականին գիտակցված համակարգ, որի հիման վրա էլ երեխան կառուցում է հասակակիցների և մեծահասակների, ծանոթ և օտար մարդկանց հետ իր հարաբերությունները:

Հայ նշանավոր գրող և մանկավարժ Ղ. Աղայանը խոսքի զարգացումը նմանեցնում է գոլորշու փոքրիկ և աննշան շիթերից գոյացող մարգարտյա հատիկներին: Ըստ նրա՝ խոսքի զարգացումը ենթադրում է մտածողության հարստացում, իսկ բառապաշարի ճոխությունը՝ գաղափարների ու գիտելիքների բազմատեսակություն:

Բազմիցս նկատել եմ, որ կրտսեր դպրոցն ավարտող երեխաների մոտ թույլ է զարգացած խոսքը և նրանք չեն կարողանում ազատ խոսք կառուցել, ուստի այս հետազոտական աշխատանքով խնդիր եմ դրել իմ առաջ պարզելու, թո արդյո՞ք հնարավոր է նոր մեթոդների, հեքիաթների, դերախաղերի միջոցով ավելի զարգացնել տարրական դասարաններում սովորողների խոսքը:

Այդ նպատակով պետք է նպատակաուղղված գործողություններ մշակել.

1. Հեքիաթը, որպես խոսքի զարգացման միջոց:
2. Ուսումնասիրել և բացահայտել հեքիաթի ազդեցությունը խոսքի զարգացման գործում:
3. Մշակել, պլանավորել դասեր հեքիաթի կիրառմամբ՝ ուղղված առաջին դասարանցիների խոսքի զարգացմանը:
4. Ստեղծել պայմանների դերային խաղերի գործունեության համար:

Խոսքի զարգացումը հեքիաթների միջոցով.

1.1Հեքիաթների դերը երեխաների կյանքում

Հեքիաթը՝ որպես գեղարվեստական գրականության ժանր, օգտագործվում է նախադպրոցական տարիքի, ապա կրտսեր դպրոցականների հետ անցկացվող բազմազան աշխատանքներում:

Մանկավարժական ոլորտում մանակավարժների կատարած հետազոտությունները ցույց են տալիս, որ կրտսեր դպրոցականի խոսքի զարգացման խթանումների խնդիրը կարելի է լուծել հեքիաթաթերապիայի միջոցով, քանի որ հենց այս տարիքն է հանդիսանում երեխայի խոսքի զարգացման և ստեղծագործության զգայուն փուլ:

Խոսքի խանգարումներ ունեցող երեխաների հետ աշխատելու ամենաարդյունավետ միջոցը հեքիաթի օգտագործումն է, որն ուղղիչ և համակողմանի ազդեցություն ունի:

Հեքիաթներում երեխաները գտնում են իրեցից, իրենց կյանքից, հոգուց մի մաս: Հեքիաթները հույս են սերմանում երեխաների մեջ: Որքան երկար երեխան հավատա կախարդական հեքիաթի հերեոսներին (փերիներ, Ձմեռ պապ), ովքեր Ամանորի նախօրեին նվերներ են տալիս, այնքան ավելի լավատես կլինեն նրա հայացքները կյանքի մասին:

Հեքիաթը շատ կարևոր նշանակություն ունի երեխայի հետ աշխատելիս, քանի որ այն օգնում է.

- երեխայի դաստիարակության, զարգացման, կրթության գործում,
- երեխայի ինքնաճանաչման գործում,
- շրջակա աշխարհի հետ փոխըմբռման գործում,
- մտածողության, հիշողության, երևակայության զարգացման հործում,
- երեխայի սոցիալ-հուզական վարքի շտկման գործում:

Այսինքն՝ հեքիաթը երեխայի դաստիարակության անբաժան տարր է:

Հեքիաթի դերը բազմաբնույթ է, ուստի այն օգնում է մատչելի լեզվով երեխաներին ծանոթացնել կյանքին, չարի ու բարու հետ:

Հեքիաթները երեխաներին ուրախություն են պատճառում և բազմազանություն են մտցնում նրանց կյանք: Նրանք ավելի լավ են հասկանում հեքիաթը, քան իրենց ուղղված մեծահասակների լուրջ խոսքը:

Եթե մեծահասակները ցանկանում են ինչ-որ բան բացահայտել երեխային, շատ օգտակար է հիշել մանկության լեզուն՝ հեքիաթ:

Բոլոր երեխաներն առանց բացառության սիրում են հեքիաթներ: Երեխաների հետ աշխատանքում չափազանց կարևոր է գտնել նրանց հետ խոսելու ճիշտ լեզուն:

Եվ հեքիաթները այդ հաղորդակցման ժամանակ ամենաարդյունավետ միջոցներն են, <<ամենահասանելի լեզուն>>:

Հեքիաթի շնորհիվ զարգանում է երեխայի երևակայությունը և ստեղծագործելու ունակությունը:

Լավ հեքիաթը կյանքի ծնունդ է, խաղ, արկած, հրաշք, ճակատագիր...

Հեքիաթի թեմաները անվերջ են:

Լսելով հեքիաթը՝ երեխան ակամա այնտեղ գտնում է իր կյանքին համապատասխան իրավիճակներ, փորձում է իրեն նույնացնել համարձակ և քաջարի հերոսների հետ:

Երեխայի հետ ընկերանալու, նրան որևէ միտք բացատրելու համար հարկավոր է նրա հետ ընկղմվել երևակայության և կախարդանքի աշխարհը, իսկ գործնական ամենալավ օգնականը հեքիաթային պատմություններն են:

Երեխաների կյանքում հեքիաթը շատ կարևոր տեղ է զբաղեցնում: Հեքիաթն ունի դաստիարակչական հզոր արժեք, բարոյական կարևոր սկզբունքներ, որոնք արտահայտվում են հերոսների արարքների, խոսքերի միջոցով:

Հեքիաթը միաժամանակ ստեղծագործական ունակությունների, բանավոր կապակցված խոսքի զարգացման արդյունավետ միջոց է:

1. Այդպիսով՝ բութ երեխան ըմբռնում է բարու և չարի գործոնը ոչ միայն հեքիաթում, այլև կյանքում, առօրյայում: Հեքիաթի վերջում բարու հաղթանակը կոգևորի նրան՝ կատարելու

բարի գործեր և հասկանալու, որ հաղթանակի բերկրանքը հեշտ չի տրվում: Այսինքն՝ հեքիաթը պետք է մեկնաբանվի և իմաստավորվի իրենց իսկ կյանքի օրինակով:

2.Հեքիաթի միջոցով երեխան հստակեցնում է աշխարհի կերպարն իր մտապատկերում և հոգում, որոշում իր տեսն ու դերը այս աշխարհում: Այդ հարցում նրան օգնում է ուսուցիչը:Նա պետք է ուղղորդի երեխային՝ մտքի և հոգու ճանապարհով:Հեքիաթի միջոցով երեխան հասկանում է, որ թագավորն էլ կարող է բարի և ազնիվ լինել, հետին աղքատն էլ:Աղքատն աննախանձ է, լիաչք և լիասիրտ:Նա անլաց և անտրտունջ կրում է իր դժբախտությունները:Անվրեժ է չարիքի դեմ:

Հեքիաթի միջոցով երեխան գիտակցում է այն հանգամանքը, որ ոչ աղքատությունը, ոչ որբությունը և ոչ էլ ձառորդությունը արատներ չեն: Հարկավոր է երեխային բացատրել և ցույց տալ այդ երևույթները՝իրական կայնքի օրինակներով, առանց վերամբարձ խրատաբանության:Այդ կերպ վեր է հանվում հեքիաթի բարոյախոսությունը:

Հեքիաթի ուսուցումը կրտսեր դպրոցում խիստ կարևոր է նաև այն առումով, որ երեխայի միտքը մաքուր է, ուստիև նրան հասու են բոլոր հեքիաթային, երկնային ու երկրային գանձերը:

Երեխան հավատում է հրաշքին:

1.2 *Հեքիաթը, որպես կրտսեր դպրոցականի հաղորդակցական կարողությունների և խոսքի զարգացման միջոց*

Երեխային հեքիաթ պատմելու ամենանպատակահարմար տարիքը 3 տարեկանն է:Սակայն դա չի նշանակում, թե դրանից շուտ չի կարելի երեխային հեքիաթ պատմել:Պարզապես պետք է ընտրել համեմատաբար պարզ սյուժե ունեցող հեքիաթներ, որտեղ ի սպառ բացակայում են սարսափելի տեսարանները:Դասվարը հանդիսանում է միջնորդ՝ հեղինակի և երեխաների միջև, դասվարի հաղորդումով է պայմանավորված երեխաների ըմբռնումը:Հաղորդման ձևերը 1-ին դասարանում երկուսն են՝ կարդալ գրքից և պատմել:2-4-րդ դասարաններում արդեն երեխան նույնպես կարող է կարդալ հեքիաթ:

Ժողովրդական հեքիաթները նախընտրելի է պատմել, ոչ թե ընթերցել: Այս դեպքում ուսուցչի և երեխաների միջև ստեղծվում է անմիջական կապ և երեխաները ոչ միայն բովանդակությունն են ըմբռնում, այլև արտահայտման ձևը՝ միմիկան:

Մինչև 3 տարեկան՝ հեքիաթը պետք է պատմել զվարճալի ձևով, ուրախ տրամադրությամբ, հարուստ դիդակտիկ նյութերով: 3-4 տարեկան երեխաներին կարելի է դասական սյուժեով, ժողովրդական հեքիաթներ պատմել, որոնք չպետք է շատ երկար լինեն, այլապես երեխան կձանձրանա և չի ցանկանա լսել մինչև վերջ:

Երեխաները սիրում են կենդանական հեքիաթներ, որտեղ կենդանիներն են հերոսներ, նրանք խոսում են, գործում, խնդիրներ լուծում: 1-ին դասարանի երեխաների համար նպատակահարմար է պատմել կենդանական հեքիաթներ, ինչպես նաև կենցաղային հեքիաթներ, որի միջոցով երեխաները ընկալում և սերտում են սոցիալական ձևերը:

Հեքիաթի միջոցով երեխան սովորում է իր համար այդ երևայական աշխարհում մտածել, գործել: Դա հիմք է դնում նրա ստեղծագործականությանը: Հետևաբար անհրաժեշտ է քննարկել հեքիաթը: Կարելի է հեքիաթը նկարել կամ բաժանել դերերն ու խաղարկել այն:

Այդկերպ երեխան զգում է, որ ինքը հասկացված է: Այդպիսի հեքիաթները ցույց են տալիս երեխային, որ պետք է ինքնուրույն հաղթահարել խնդիրը, որ ուժը հենց իր մեջ է և կողմնակի օգնության սպասել պետք չէ:

Երեխաների հաղորդակցական կարողությունների և երևակայության զարգացմանվառ օրինակ է Հովհաննես Թումանյանի «Ուլիկը» հեքիաթը: Նախ և առաջ հեքիաթում շատ գեղեցիկ ցուցադրվում է մոր և մանկան հուզական կապը (երբ ձագուկը կուրծք է ուտում), հեղինակը երեխային պատրաստում է սոցիալական կյանքի, չէ՞ որ այծ մայրիկն ամեն առավոտ գնում է արոտ անելու (աշխատելու), որ կաթ ունենա, ու նրանք երկուսն էլ կուշտ քնեն, դրա համար մայրիկը ծուլություն չի անում, առավոտյան վաղ արթնանում և գնում է աշխատանքի: Դեռ հեքիաթը չսկսած, հեղինակն արդեն իսկ աշխատանքային դաստիարակության խնդիր է լուծում: Արոտից հետո մայրը տուն է վերադառնում, բայց անգամ իր տուն մտնելուց առաջ նա դուռը թակում է՝ այստեղ վարվելակերպի նորմերն են ցուցադրվում, լուծվում է ևս մի խնդիր՝ բարոյական դաստիարակություն: Այծ մայրիկը երգում է իր ձագուկի համար, դա նրանց նշանաբանն է, այստեղ կրկին ցուցադրվում է մոր և մանկան հուզական կապը, նպաստում է հաղորդակցական կարողությունների զարգացմանը, քանի որ նույն երգը կրկնվում է: Երեխաները սիրում են երգեր և ավելի հեշտ են ըմբռնում ուսուցանվող նյութը: Մայրիկի ձայնը լսելով ուլիկն իսկույն վեր է թռչում և բացում է դուռը:Հեքիաթում ամեն ինչ այնքան նրբորեն է նկարագրված, հեղինակն այսկերպ ցույց է տալիս ուրախություն հույզի դրսևորումը: Հետո գալիս է գայլը և հաստ ձայնով երգում այծ մայրիկի երգը: Ուսուցանվում է, որ մայրիկի ձայնը բարակ է, իսկ գայլի ձայնը հաստ: Ուլիկը փոքրիկ է, տանը մենակ է լինում, բայց շատ խելացի է ու քաջ, որ գայլի ձայնը տարբերում է մոր ձայնից և քաջությամբ քշում է գայլին հեռու:Հեքիաթում երգը կրկնվում է 3 անգամ, երեխաները հեշտությամբ սովորում են, ինչի արդյունքում զարգանում է մտավոր զարգացման մտապահելու գործընթացը: Երբ մայրիկը տուն է գալիս, ուլիկը պատմում է, թե ինչքան է վախեցել, այստեղ կարևորվում է հույզերը չթաքցնելու և դրանցից չամաչելու կարողությունը:Մայրն էլ է վախենում, բայց սպառնում է գայլին սպանել իր պոզերով, եթե հանկարծ նորից գա ձագուկին նեղացնելու: Այս հեքիաթը նաև նպաստում է երևակայության զարգացմանը, քանի որ այնպես է ավարտվում, կարծես գայլը նորից գալու է և երեխաները պատկերացնում են, որ գայլը նորից գա, մայրիկն ինչպես իր պոզերով կհարվածի նրան, ինչպես կվախեցնի գայլին:Հեքիաթում վառ արտահայտված են հաղորդակցման օրինակներ, ինչը կրկնելով, պատմելով երեխաների մոտ զարգանում են հաղորդակցական

կարողությունները: Իսկ նոր բառերը նպաստում են խոսքի զարգացմանը, բառապաշարի հարստացմանը, պասիվ բառապաշարի ակտիվացմանը:

Այս ենթագլխում կներկայացնեմ երեխայի խոսքի զարգացման՝ աստիճանաբար անցման փուլերը, որից հետո հասկանալի կլինի, թե երեխայի հետ ե՞րբ և ինչպե՞ս պետք է հեքիաթի աշխարհը մուտք գործել:

Ահա այդ փուքերը.

Նախաթոթովանքի կամ գոգղանքի փուլ

Եթե հետծննդյան կյանքի առաջին-երկրորդ ամիսներին երեխան միայն լաց լինելով է արտահայտում իր վիճակը, ապա 2-3-րդ ամիսներից սկսած սկսում է ձայներ արձակել, որոնք կազմված են մեկ-երկու ձայնավորից և նույնքան էլ կոկորդային անորոշ հնչյուններից: Եթե երեխան շրջապատված է սիրով և քնքշանքով, ապա ավելի հաճախ է ձայներ արձակում: Գոգղանքի փուլը տևում է մինչև 6 ամսականը:

Թոթովանքի փուլ

Թոթովանքի շրջանն սկսվում է 6 ամսականից: Այս փուլում երեխայի արձակած ձայներն իր շրջապատում խոսվող լեզվի հնչյուններն են: Դա նշանակում է, որ այս փուլում սոցիալական շրջապատն արդեն վճռական ազդեցություն է գործում երեխայի խոսքի զարգացման վրա:

Պասիվ խոսքի փուլ

8-9 ամսականում նորմալ զարգացող երեխան կարող է հասկանալ հրամայական և հարցական կարճ նախադասություններ, և ընդ որում՝ երեխան հասկանում է ոչ այնքան նախադասության ընթացքը, որքան նրա հուզական կողմը, տոնը, շեշտադրումը, ժեստերը և դիմախաղը:

Իրադրական խոսքի ենթափուլ

Մոտավորապես մեկ տարեկանում նորմալ զարգացող երեխաների մեծ մասը սկսում է արտասանել առաջին բառերը, սակայն երեխաներն այս հարցում ունեն անհատական բավականին մեծ տարբերություններ: Որոշ երեխաներ կարող են ակտիվ խոսքի փուլին անցնել 2 տարեկանում կամ ավելի ուշ:

Կապակցված համատեքստային խոսքի փուլ

Խոսքի զարգացման այս փուլն սկսվում է 1.5- 2 տարեկանից: Այս փուլում երեխայի խոսքը հանդես է գալիս որպես նրա գործողություններին ուղեկցող գործընթաց: Օրինակ՝ երեխան տուն պատրաստելիս ինքն իրեն խոսում է, տալիս է այն առարկաների անունները, որոնցով խաղում է:

<<Ի՞նչ է >> և <<ինչո՞ւ>> հարցերի փուլ

Մոտավորապես 2-2.5 տարեկանից սկսած երեխան բազմաթիվ հարցեր է տալիս շրջապատող առարկաների և երևույթների մասին: Սկզբնական շրջանում այդ հարցերը հիմնականում առարկաների անուններն իմանալու խնդիրն են լուծում և ունենում են «ի՞նչ է սա» ձևը: Երեխան նմանատիպ հարցեր է տալիս, ընդ որում՝ նույն առարկայի անունը նա կարող է հարցնել մի քանի անգամ: Այդ ձևով նա ոչ միայն ստուգում է իր իմացածը, այլև հաղորդակցվում է մեծահասակների հետ:

3-3.5 տարեկանում երեխայի հարցերի բնույթն արդեն փոխվում է: Նա ցանկանում է իմանալ ոչ միայն առանձին առարկաների անունները, այլև դրանց ծագումը՝ ով է դրանք գնել, ինչի համար և այլն: Այլ կերպ ասած՝ նրան արդեն հետաքրքրում են առարկաների և երևույթների պատճառահետևանքային կապերը:

Խոսքի զարգացման գերագույն փուլ

Կան երեխայի խոսքի զարգացման գերագույն փուլեր, որոնց իմացությունը մեծ նշանակություն ունի: Դրանք այն փուլերն են, որոնց ընթացքում երեխայի խոսքի զարգացումը խիստ արագանում է: Դրանցից առաջինն սկսվում է 2-2.5 տարեկանում և տևում է մինչև 6-7 տարեկանը: Պարզվում է, որ եթե այս փուլը լիարժեք չի օգտագործվում մայրենի լեզվի յուրացման համար, ապա հետագայում կորցրածը լրիվ փոխհատուցելն անհնարին է դառնում: Ընդ որում՝ խոսքի ոչ լիարժեք զարգացումը հանգեցնում է իմացական ոլորտի զարգացման դանդաղեցման: Երեխան մայրենի լեզուն յուրացնում է մինչև 5-6 տարեկանը:

Երեխային հորինել սովորեցնել. Երբ աշխատում ենք երեխայի հետ՝ շեշտը դնում ենք նրա երևակայության զարգացանը: Միասին երևակայելու և պատկերացնելու արդյունքում ծնունդ են առնում հեքիաթներ, պատմություններ, որոնք թաքնված են մարդու ենթագիտակցության խորքերում: Սա ստեղծագործական հրաշք է, հաճախ անբացատրելի մի բան:

Նշանավոր իտալացի Ջաննի Ռոդարին առաջարկում է խաղալ բառերի հետ, բացահայտել դրանց բոլոր հնարավորությունները։ Օրինակ, նա տալիս է բառ և առաջարկում դրա կազմի մեջ մտնող հնչյուններով կազմել նոր այնպիսի բառեր, որոնք կարող են միանալ և կազմել նախադասություն։ Այնուհետև կամ որևէ հեքիաթ է հյուսում դրա շուրջ, կամ էլ այդ նախադասությունը դառնում է ինքնուրույն ստեղծագործության համար վերնագիր։ Ջաննի Ռոդարիի օգնությամբ կարելի է հեքիաթը դարձնել սխալը, որը դառնում է զվարճալի։

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՄԱՍ

Բոլոր ժամանակներում էլ երեխաները ձգտել են խաղալու…դա ինքնարտահայտման,ինքնակայացման,ինքնակատարելագործման,աշխարհը ճանաչելու հրաշալի միջոց է:Խաղը թեթևացնում է սխալների և անհաջողությունների ազդեցությունը:Լինելով գործունեության բավականին լուրջ տեսակ՝ այն միևնույն ժամանակ երեխայի մեջ չի առաջացնում հիասթափության, անհաջողության զգացողություն:Խաղային գործունեությունը բացառիկ նշանակություն ունի մարդկանց մտավոր և ֆիզիկական զարգացման համար:Խաղը ուսուցչի օգնականն է,ուսումնական գործունեությունը երեխաների համար հետաքրքրաշարժ և հաճելի դարձնելու, նրանց հոգնածությունը և լարվածությունը թուլացնելու,ուշադրությունը կենտրոնացնելու, մտածողությունն ու երևակայությունը զարգացնելու գործում:

Ստորև ներկայացնում եմ խաղեր, որոնք կօգնեն էլ ավելի հետաքրքիր և արդյունավետ անցկացնել դասապրոցեսը խոսքի զարգացման ժամանակ:

Խաղ 1.

Խոսող քարը

Խաղի նպատակը:

Բանավոր խոսքի,մտքերը հակիրճ արտահայտելու, հաղորդակցվելու կարողությունների զարգացում:

Խաղի կահավորումը:

Նախապատրաստել ոչ մեծ, գեղեցիկ քար:

Խաղի ընթացքը:

Խաղի մասնակիցներին կանգնեցնել շրջաձև

Հրահանգ:

Պատկերացրե՛ք՝ իմ ձեռքի քարը սովորական չէ, այլ կախարդական:Հայտնվելով մարդկանց ձեռքում՝ այն խոսեցնում է նրանց,օգնում լինելու ազատ,անկաշկանդ:Ժամացույցի սլաքի ուղղությամբ փոխանցելով «խոսող քարը»՝ պետք է համառոտ պատմենք նյութի մասին:

Ուշադրություն:

Որպեսզի աշակերտները նպատակային խոսեն, կարելի է նախապես գրատախտակին գրել հարցեր, մեկ-երկու անգամ բարձրաձայն կարդալ դրանք և խաղի ընթացքում փորձել խոսել այդ հարցերի շուրջ:

Հարցերը կարող են լինել այսպիսիք՝

-Ո՞վ էր հեքիաթի բարի հերոսը:

-Ո՞վ էր հեքիաթի չար հերոսը:

-Ի՞նչը հաղթեց հեքիաթում:

Խաղ 2.

Ներկայացրու մեկ նախադասությամբ

Խաղի նպատակը:

Կապակցված խոսք կառուցելու կարողության զարգացում:

Խաղի ընթացքը:

Խաղի մասնակիցներին բաժանել երկու խմբի

Հրահանգ: Խաղալու ենք խմբերով :Յուրաքանչյուր խումբ պետք է նախապատրաստի նախադասություններ տարբեր հեքիաթներից : Այնուհետև խմբերը հերթով իրար կառաջարկեն տարբեր հեքիաթներից նախապատրաստած իրենց նախադասությունները , իսկ հակառակորդ թիմը պետք է գուշակի այդ հեքիաթը:

ԴԱՍԻ ՊԼԱՆ 1.

Դասարան I

Առարկա- մայրենի

Դասի թեման՝ « Երեք խոզուկները », Սերգեյ Միխալկով (անգլիական ժողովրդական հեքիաթ)

Ժամաքանակը -2դասաժամ

Նպատակ -.

- հեքիաթի բովանդակության ընկալում
- Արժեքների գնահատում
- Հերոսներին բնութագրելու կարողությունների զարգացում

Վերջնարդյունքներ

- Ունկնդրածի բովանդակության վերարտադրում `իրենց պատկերացմամբ ու կարծիքներ հայտնելով
- Նոր սովորած բառերի վերհանում
- Դերերի բաշխում և դերախաղ

Դասի ընթացքը

- Մուլտֆիլմի դիտում (հայերեն տարբերակը)
- Ուսուցչի ընթերցմամբ ունկնդրել հեքիաթը
- Քննարկել հարցերի միջոցով

II Դասաժամ.

- Վերհիշել հեքիաթը
- Բաշխել դերերը
- Դերախաղ

ՈՒՍՈՒՑՉԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԴԻՏԱՐԿՈՒՄ

Ամիս,ամսաթիվ 03. 03. 2022թ
Առարկան մայրենի
Դպրոցը,դասարանը 1, Վիգարուֆայորի Յու. Խաչատրյանի անվան դպ.
Ուսուցչի ա/ա Բարիկ, տնտեսական
Դասի թեման «Երեք բոլոշները»
Դասավանդման նպատակը Երկրաչափական գերությունը բուսի նմանակ

N	Ուսուցչի աշխատանքի բնութագրիչներ	1	2	3
1.	Դասի հիմնական նպատակներն ու խնդիրները հստակ էին և իրագործվեցին	✓		
2.	Ապահովված էր համագործակցային ուսուցման տարրերի առկայությունը	✓		
3.	Խմբերի բաժանման սկզբունքները, խմբերի մեծությունը համապատասխանում էին դասի նպատակներին և կիրառված մեթոդներին	✓		
4.	Դասի ընթացքում օգտագործվում էին տարբեր մեթոդներ, հնարներ, միջոցներ, զննական պարագաներ	✓		
5.	Դասի հիմնական փուլերը տրամաբանորեն շաղկապված էին	✓		
6.	Ուսուցիչն ուղղորդում էր աշակերտներին, տալիս հարցեր (բաց, անձնակենտրոն)	✓		
7.	Աջակցում էր համագործակցային աշխատանքին, հետևում է աշակերտների/ խմբերի գործունեությանը		✓	
8.	Հետևում և նպաստում էր մտածողության հմտությունների զարգացմանը		✓	
9.	Հետևում և նպաստում էր համագործակցային սոցիալական հմտությունների զարգացմանը		✓	
10.	Ապահովում էր ակադեմիական գիտելիքների յուրացումը	✓		
11.	Պարզաբանում էր թյուրըմբռնումները	✓		
12.	Ապահովում էր հետադարձ կապ՝ հատկացնելով բավարար ժամանակ	✓		
13.	Աշակերտներին հնարավորություն էր տալիս կշռադատել, գնահատել իրենց աշխատանքը	✓		
14.	Օգտագործում էր գնահատման համապատասխան ձևեր			
15.	Դասի պլանի առկայություն	✓		
16.	Հաշվի էր առնում աշակերտների անհատական ուսումնառության ոճերը		✓	
17.	Ստեղծում էր միջառարկայական և ներառարկայական կապեր	✓		

Նկատառումներ՝ Հիշեցրեցնել խմբային հերթերի բաշխման կանոնները, ֆեսիլիտացիայի աշխատանքի խնդիրի սրամիտները, ապրիլ Տնտեսագիտի դիտարարությունը։

Դիտարկող՝ Հ. Մարգարյան

Դասի պլան 2.

Դասարան I.

Առարկա –«կերպարվեստ»

(ինտեգրված առարկա՝ մայրենի)

Ժամաքանակը - 1դասաժամ

Նպատակ – գիտելիքի ընդհանրացում և համակարգում

Վերջնարդյունքներ

- պատկերի և գունավորի պարզ պատկերներ (տնակ, խոզուկ)
- Միտքն արտահայտի հետաքրքիր
- Համագործակցի ընկերների հետ

Դասի ընթացքը

- Վերհիշել մայրենիի ժամին ունկնդրած , վերարտադրած և դերախաղի միջոցով ամփոփած «Երեք խոզուկներ » հեքիաթը
- Բաժանվել 3 խմբի և ըստ հրահանգների կատարել առաջադրանքները :

➢ I Խումբ՝ նկարի ծղոտից տնակն ու խոզուկին

➢ II խումբ ՝փայտից տնակն ու խոզուկին

➢ III խումբ ՝քարե տնակն ու խոզուկին

- Աշխատանքը ավարտելուց հետո խմբերը ներկայացնեն իրենց աշխատանքը ՝ հիշեցնելով խոզուկի անունը, նրա կառուցած տունը , նրա բնավորությունը և այլն:

Դասի պլան 3.

Դասարան I

Առարկա – մայրենի

Թեման՝ «Աղվեսն ու ագռավը », Աթաբեկ Խնկոյան

Դասի նպատակը.

- Հեքիաթի բարոյախրատական իմաստի ընկալում
- Բառապաշարի հարստացում

Վերջնարդյուքներ

Աշակերտը կարողանա ՝

ա) գրագետ խոսքով ներկայացնել հեքիաթը

բ) տարբերել բարին ու չարը

գ) բնութագրել հերոսներին

Ընթացքը՝

- Ունկնդրել հեքիաթը, որը կարդում է ուսուցիչը
- Բացել դասագրքերը (էջ 19) և ,նորից հիշելով լսածը, պատմել նկարը
- Կատարել բառային աշխատանքը
- Խաղ՝ "Խոսող քարը"

(Առաջին շրջանով կնկարագրեն աղվեսին ,երկրորդ շրջանով՝ ագռավին)

- Ժամանակ մնալու դեպքում դիտել համանուն մուլտֆիլմը :

ՈՒՍՈՒՑՉԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԴԻՏԱՐԿՈՒՄ

Ամիս,ամսաթիվ 27.09.2022թ.
Առարկան Տեղեկատվություն
Դպրոցը,դասարանը Հանրակրթական դպրոց, դաս. 5
Ուսուցչի ա/ա Հակոբյան Խաչիկ
Դասի թեման Հոր. Գրեգորյան ու Հոգվեղ ու ազգագրությունը
Դասավանդման նպատակը Հանձնարարելիք. բնակչություն, նրա բնակության խտություն և բնակչության խտության ազդող գործոններ

N	Ուսուցչի աշխատանքի բնութագրիչներ	1	2	3
1.	Դասի հիմնական նպատակներն ու խնդիրները հստակ էին և իրագործվեցին	✓		
2.	Ապահովված էր համագործակցային ուսուցման տարրերի առկայությունը		✓	
3.	Խմբերի բաժանման սկզբունքները, խմբերի մեծությունը համապատասխանում էին դասի նպատակներին և կիրառված մեթոդներին			
4.	Դասի ընթացքում օգտագործվում էին տարբեր մեթոդներ, հնարներ, միջոցներ, գնական պարագաներ	✓		
5.	Դասի հիմնական փուլերը տրամաբանորեն շաղկապված էին	✓		
6.	Ուսուցիչն ուղղորդում էր աշակերտներին, տալիս հարցեր (բաց, անձնակենտրոն)	✓		
7.	Աջակցում էր համագործակցային աշխատանքին, հետևում է աշակերտների/ խմբերի գործունեությանը	✓		
8.	Հետևում և նպաստում էր մտածողության հմտությունների զարգացմանը	✓		
9.	Հետևում և նպաստում էր համագործակցային սոցիալական հմտությունների զարգացմանը	✓		
10.	Ապահովում էր ակադեմիական գիտելիքների յուրացումը	✓		
11.	Պարզաբանում էր թյուրըմբռնումները		✓	
12.	Ապահովում էր հետադարձ կապ՝ հատկացնելով բավարար ժամանակ		✓	
13.	Աշակերտներին հնարավորություն էր տալիս կշռադատել, գնահատել իրենց աշխատանքը	✓		
14.	Օգտագործում էր գնահատման համապատասխան ձևեր			
15.	Դասի պլանի առկայություն	✓		
16.	Հաշվի էր առնում աշակերտների անհատական ուսումնառության ոճերը	✓		
17.	Ստեղծում էր միջառարկայական և ներառարկայական կապեր	✓		

Նկատառումներ՝ Հանձնարարելիք ուշադիր ունկնդրել դասի ընթացքում, հետևյալում միջոցներ Հոր բերելիս բացել Հոգվեղ հոդվածները Հոր բաներ, նկարագրելիս հոդվածի հետևանքներ

Դիտարկող՝ Սամվելյան Գրիգորյան

Եզրակացություն

Ասեմ, որ իմ հետազոտության արդյունքը լիարժեք կերևա մայիս ամսին , քանի որ դասավանդում եմ I դասարանում և դեռ շատ երկար աշխատանք կա նպատակներին ու վերջնարդյունքներին հասնելու համար :

Այնուամենայնիվ այս կարճ ժամանակահատվածում կարողացա այս աշխատանքի ընթացքում պարզել՝

- Հեքիաթներն իսկապես շատ են օգնում խոսքի զարգացմանը , եթե ճիշտ և ծրագրավորված են պլանավորվում :
- Հասկացա, որ կարևոր է հեքիաթների հետ անպայման պլանավորել խաղեր, դերախաղեր , մուլտֆիլմեր:
- Ինտեգրել տեխնոլոգիա , կերպարվեստ , երաժշտություն առարկաների հետ
- Կարևոր է ճիշտ և գեղեցիկ ընթերցումը ,ձայնը :

Դեռ ունեմ նախատեսված երկար աշխատանք և համոզված եմ, որ մայիս ամսին կքաղեմ իմ աշխատանքի պտուղները :

Օգտագործված գրականություն

1. Նախաշավիղ 8.2011
2. Նախաշավիղ 3.2015
3. «Ընթերցանության կարողությունների ձևավորում տարրական դասարաններում ՝ հիմնված հավաստի գնահատման վրա» Երևան 2014
4. «200 խաղ» Զանգակ 2017